Մրցույթ՝ «Երևանի թիվ 37 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (13 դասաժամ), Ֆիզիկայի (6 դասաժամ), տեխնոլոգիայի (աղջիկներ 4 դասաժամ), անգլերենի (8 դասաժամ)ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3 × 4 չափի
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ):
3. Անձը հաստատող փաստաթուղթ
4.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայութ- յան դեպքում
5. Ինքնակենսագրություն
6.Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ –ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաս- տող փաստաթղթեր՝ առկայության դեպքում
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստողփաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **հունիսի 2-ից մինչև հունիսի 15-ը** ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 14:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. հունիսի 20-ին ժամը 12:00,** Երևանի թիվ 37 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երևան, Քանաքեռհէկ 14 : Տեղեկությունների համար զանգահարել 010 23-10-32 հեռախոսահամարով: